Օ Ր Ա Կ Ա Ր Գ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2017 թվականի մարտի 17-ի, ժամը 14:00-ի նիստի

1. **2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների և խնդիրների մասին:**
   Զեկուցող՝ ուսումնակազմակերպական աշխատանքների գծով պրոռեկտոր **Մ.Ն.Հարությունյան:**

2. **Ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) խորհրդի հաշվետվությունը կատարված աշխատանքների մասին:**
   Զեկուցող՝ ուսանողական գիտական ընկերության խորհրդի նախագահ **Հ.Ա.Արզումանյան:**

3. Ուսումնակազմակերպական աշխատանքների գծով պրոռեկտոր **Մ.Ն.Հարությունյանի** հաղորդումը **ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների ձևավորման մասին:**

4. **Ընթացիկ հարցեր:**

   1) **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը» հաստատելու և գիտական խորհրդի՝ 2007 թվականի հուլիսի 1-ի նիստում (արձանագրություն N 10) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնների վարիչների ընտրության ընթացակարգը» ուժը կորցրած ճանաչելու մասին:**
      Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր **Պ.Ա.Քալանթարյան:**

   2) **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանի ընտրության ընթացակարգը» հաստատելու և գիտական խորհրդի՝ 2010 թվականի հոկտեմբերի 1-ի նիստում (արձանագրություն N 1) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանների ընտրության ընթացակարգը» ուժը կորցրած ճանաչելու մասին:**
      Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր **Պ.Ա.Քալանթարյան:**

   3) **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի առկա ուսուցմամբ մագիստրատուրայի 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգը քննարկելու և հաստատելու մասին:**
      Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր **Պ.Ա.Քալանթարյան:**

4) **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգը քննարկելու և հաստատելու մասին:**

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր **Պ.Ա.Քալանթարյան:**

5) **Ատենախոսությունների թեմաներ և գիտական ղեկավարներ հաստատելու մասին:**

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր **Պ.Ա.Քալանթարյան**

6) Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Աղասու Թավադյանի** ընդհանուր խմբագրությամբ **«Տնտեսամաթեմատիկական մեթոդներ և մոդելներ»** ուսումնական ձեռնարկի (283 էջ ծավալով) հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ **Խ.Ա.Մխիթարյան:**

7) Ֆինանսական հաշվառման ամբիոնի դասախոսների ներկայացրած (ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ **Ա.Հ.Սարգսյան**, դոցենտ **Ն.Ս.Օգանեզովա**, **Ս.Ա.Չիբուխչյան**, տ.գ.թ. **Ն.Ռ.Մարտիրոսյան**, տ.գ.թ. **Թ.Ա.Ստեփանյան**) **«Հաշվապահական հաշվառում. թեստերի և խնդիրների ժողովածուի»** (312 էջ ծավալով) հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ **Խ.Ա.Մխիթարյան:**

8) Ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի դոցենտ, քիմիական գիտությունների թեկնածու **Սիրանուշ Հարությունի Հարությունյանի «Արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության հիմնահարցեր»** ուսումնական ձեռնարկի (202 էջ ծավալով) վերահրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ **Խ.Ա.Մխիթարյան:**

9) **«Գործարար միջավայրի բարելավման և միջազգային տնտեսական համագործակցության ընդլայնման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում»** խորագրով ՀՊՏՀ 26-րդ գիտաժողովի նյութերի (450 էջ ծավալով) հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ **Խ.Ա.Մխիթարյան:**

10) **«Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի միջազգային խմբագրական խորհրդի կազմը հաստատելու մասին:**

Զեկուցող՝ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ **Խ.Ա.Մխիթարյան:**

Գիտական քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

17.03.2017 թ.